

ղաքին մէջ, 290 ապրիլ 23 ին, Ս. Գէորգ նահատակութեան պոսկը ստացաւ»:

Ուխտաւոր Արգուլֆ եպս. 670 ին գրի առնուած «Ս. Տեղեաց շուրջ իր պատմութեան» կանուխէն կատարուած անգղ. թարգմանութեան մէջ կուտայ անոր պատմութիւնը: Ան կը խօսի նաև Լիւդ քաղաքին մէջ մարմարէ սիւնի մը մասին, որուն կապուած էր սուրբը և ձաղկուած՝ գլխատուելէ առաջ. այնչափ մեծ էր Ս. Գէորգի սրբութիւնը որ անոր մարմնոյն տպաւորութիւնը մարմարին վրայ դրոշմուած էր: Շատ տարիներ յետոյ, անհաւատ մը ծաղրած ըլլալով սիւնին նկատմամբ ընծայուած յարգանքը՝ երբ իր ձեռքը անոր վրայ դրաւ, սաստիկ կերպով բռնուեցաւ, և այսպէս անշարժ մնաց մինչեւ որ իր մեղքին վրայ զըզջաց եւ Աստուծոյ ողորմութեամբը փրկուեցաւ ան: Ս. Գէորգի պատմութիւնը տարածուած ըլլալով ամբողջ Անգղիոյ մէջ, կարելի է երեւակայել թէ ան որքան զօրաւոր կերպով կոչում կ'ընէ բոլոր դասակարգերուն: Կնոջ մը իր ասպետական օգնութիւնը, իր յանդուգն պայքարը վիշապի մը հետ՝ որը վերջնակա՛նապէս յաղթահարուեցաւ(*), կայսերական չար հրովարտակին աներկիւղ դատապարտութիւնը, այնպիսի գործեր էին որոնք ուժգին արձագանգ մը կրնային գտնել անգղիացիներու սիրտերուն մէջ: Այս կերպով Ս. Գէորգի պատմութիւնը ժողովրդականութիւն մը շահած էր, և անոր անունը ընտանեկան բառ մը եղաւ: Լիւդի մէջ սուրբին տապանին վրայ կառուց-

(*) Վիւային պատմութիւնը ո՛ր եւ է Վկայաբանութեան մէջ չի յիշուիր. կ'երեւի թէ Եւրոպայի ռամիկներու եւ պատկերահաններու աւանդութիւնն է (P. E. F. 1918):